մտքից, եթէ բաղդաւոր դիպուածով չբերէին եւ նորա առաջ չդնէին։ Մենք ի բոլոր սրտէ ցանկանում ենք, որ նա վայելէ իւր բաղդի արգասիքը. բայց Վիեննայի թերթի այն հետեւութիւնը, թէ նա այդպիսով Ն ի ւ տ ո ն է հանդիսացել եւ «տիեզերաց շարժման վարդապետութիւն» հանդէս բերել, մինչ ս. Էջմիածնի միաբանները մինչեւ այժմ տեսնում էին խնձորի ծառէն ընկալը» եւ ոչինչ չէին հասկանում՝ առնուազն չափազանցութիւն է։

Աւելի զարմանալին այն է, որ նոյն թերթը, նոյն տեղը, բոլորովին հակառակ եզրակացութեան է եկել՝ Արարատի յիշեալ յօդուածին կից մեր հրատարակած Խ ո ր ե ն ա ց ու պ ա տ մ ու թ ե ա ն հ ա տ ու ա ծ ի նկատմամբ։ Այդ հատուածի վերայ ուշադրութիւն ենք դարձրել մենք ինքներս, առանձին խնամքով եւ բաւականաչափ աշխատութեամբ «լուսատպել ենք մե՛նք՝ ինչպէս եւ նորա մասին գրած նկատողութեան ստորեւ Կ. Վ. տառերը ցոյց են տալիս, բայց Հ ա ն դ է ս ա մ ս օ ր ե ա յ ի համար այն «անխոնջ գրագէտ Գալուստ Տէր Մկրտչեանի մէկ նոր գիւտն» է։ Որեւէ այդ ենթադրութեան առիթ եղել է մեր յիշատակութիւնը, թէ Խորենացու հատուածին յարակից նիւթերը Գ. Տէր Մկրտչեանը պատրաստել է տպագրութեան համար. բայց մի՞թէ մէկից միւսը հետեւում է։

Կ. Վ.

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.

ԾԱՂԻԿՆԵՐԻ ԽՆԱՄՔ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ.

Գերմանական բազմաթիւ դպրոցական համայնքներից մէկի մէջ (որ բաղկացած է մի քաղաքից, մի գիւղից եւ մի իշխանական կալուածքից) տարիներից ի վեր հաստատուել է մի մանկավարժական ընկերութիւն, հետեւեալ նպատակներով.

1. Տարածել դաստիարակութեան վերաբերեալ լուսաւոր գաղափարներ խօսքով, գրով, օրինակով (կազմելով երեկոներ ծնողների մասնակցութեամբ, տարածելով մանկավարժական գրուածքներ, օգտուելով օրական մամուլից եւ այլն).

2. Հոգալ, որ դպրոցական դասերից ազատ միջոցներում աշակերտները ունենան յարմար զբաղմունքներ եւ հսկողութիւն (մանկական խաղեր, ծաղիկների խնամք եւ այլն).

3. Հոգալ, որ նոյնօրինակ զբաղմունքներ եւ հսկողութիւն ունենան նաեւ դպրոցից ելած պատանիները (համեստ զուարճութեան երեկոներ եւ այլն).

4. Օժանդակել եւ պաշտպանել դպրոցներին նպաստաւոր հաստատութիւնները (խնայողութեան գանձարաններ, դպրոցական գրադարաններ, դպրոցական պարտէզներ եւ այլն)։

Ընկերութիւնն իւր գոյութեան կարճ ժամանակում շատ բարիք է գործել եւ շատ ուրախութիւն է սփռել։ Ծնողական երեկոները միշտ բազմամարդ են լինում։ Խնայողութեան գանձարանը արդէն 178 խնայող անդամներ ունի, որոնք ի միասին տարեկան մօտ 2500 մարկ են յետ ձգում։ Մայիս, յունիս, յուլիս եւ օգոստոս ամիսներում կազմուող մանկական խաղերում վերջին տարին մասնակցեցին 1528 անդամներ։ Բայց ամենամեծ ուրախութիւն է պատճառում՝ մեծին եւ փոքրին, ծաղիկների խնամքը։ Ամենայն տարի մայիսի 1-ին բարձր եւ միջին դասարանի աշակերտուհիներին ընկերութիւնը բաշխում է ծաղկի տունկեր այն փախճանով, որ տնարարութեան սովորութիւնը կենդանացնէ, մանաւանդ փոքրիկ խնամակուհիներին ընտելացնէ սիրել բուսական կեանքը, տոկուն լինել, փոյթ ունենալ, հաւատարմութեամբ պարտականութիւն կատարել։

Բոյսերի ընտրութեան ժամանակ աւելի ուշք են դարձնում, որ բաշխուած տեսակները լաւ խնամքի տակ զգալի կերպով արգիւնաւոր լինին։ Զոր օր. այս տարի ստացան Միջին դասարանները՝ երկու տեսակ պրագըլակոնց (pelarganium zonale եւ peltatum), ագուեստկ (fuchsia hybrina), պետունիա (petunia hybrida).

Բարձր դասարանները՝ pegonia metalica, coleus, արեւադէմ (heliotropium peruvianum) եւ սենեկի լորի։

Ծաղիկները բաշխւեցան քաղաքային ուսումնարանի մարզարանում մի թերթի հետ ի միասին, հետեւեալ տեղեկութիւնները մէջը նշանակելու համար.

1. Աշակերտուհու համարը, դասարանը եւ անունը.
2. Ծաղկի անունը.
5. Տալու օրը.

4. Չորացել է և փոխարէնը այլ ծաղիկ ստացուել է այս ինչ … օրը.

5. Տունկը փոխադրուել է այս ինչ … օրը.

6. Ցուցահանդիսին ներկայացուել է այս ինչ … օրը.

7. Գովութեան արժանացել է այս ինչ… մրցանակով.

8. Ծանօթութիւններ.

Ծաղիկներ յանձնելուն պէս՝ օրիորդներին խրատներ ևս տալիս էին իրանց խնամոց յանձնուած ծաղիկների էութեան և պայմանների մասին (տնկելու տեղն ու հողը, ջրելը, մաքրելը, ցողունի և տերևների կապելը, թառամած կամ հիւանդացած մասերի հեռացնելը և այլն) և բացի սորանից առաւելապէս նոցա ուշքն էին դարձնում հետևեալ հանգամանքների վերայ.

1. Ծաղիկները ձեր խնամոյն ենք յանձնում օրիորդներ, և ոչ թէ ձեր մայրերի կամ մեծ մայրերի խնամոց: Ով որ ստացած տունկը ինքն անձամբ և փութով խնամէ, նա կարող է յոյս ունենալ, թէ գովութեան կարժանանայ:

2. Եթէ տունկը չորանայ, իսկոյն տեղեկութիւն պէտք է տալ ուսուցչին: Նա հարկաւոր տնօրէնութիւններ կանէ (թերթի մէջ ծանուցում կուտայ—փոխարէնն այլ ծաղիկ կուտայ):

3. Փոխադրութիւնը նշանակած օրը կը կատարուի պարտիզի մէջ:

Ութը շաբաթ տունկը խնամելուց յետոյ, հասաւ արդիւնքը տեսնելու և փոխադրութեան օրը: Մանուկները դասարան դասարան այն պարտէզը հրաւիրուեցան, որտեղից որ տունկերը ստացուել էին: Պարտիզպանը հիմնաւոր քննութեան ենթարկեց իւրաքանչիւր տունկը, խորհուրդներ տուեց խնամքի շարունակութեան համար և վերջապէս իւր օգնականների միջոցով տեղն ու տեղը նոր հողի մէջ փոխադրել տուեց, առանց վարձ առնելու: Այսպէս շարունակեցին խնամեալները կանաչել և ծաղկել դուրսը, պատուհանի սեմքի վերայ, թափանցիկ ապակու յետևն, մինչև որ վերջապէս հասաւ ցուցահանդէսի ցանկալի օրը: Օգոստոսի 31-ին դասարաններում ծանուցում տրուեցաւ.

1. Սեպտեմբերի 1-ին ծաղկի տունկերը դարձեալ պէտք է ներկայացուին: Այս վախճանով մարզարանում պիտի հաւաքուին՝ ա. դասարանը ժամի մէկին, բ. դասարանը ժամի 2-ին, գ. դասարանը ժամի 3-ին և դ. դասարանը ժամի 4-ին:

2. Իւրաքանչիւր տունկի ծաղկամանը պէտք է փաթաթուի գունաւոր մետաքսակերպ թղթով և տակի թաղար ունենայ:

3. Տունկի նեցուկ ձողի վերայ պէտք է երկու փոքրիկ մեխերով մի քարտ պնդացնել, որ խնամակալուհու անձի մասին տեղեկութիւններ պիտի բովանդակէ:—(Այս քարտերը ձրի են ստանում մանուկները: Նոքա տպագրուած ձև ունին հարկաւոր մասերով—անուն, դասարան, հասակ—իսկ մնացածը վերան լրացնում են աշակերտուհիները ի միասին գրութեան դասերից վերջը):

Ցուցահանդէսը տևում է երկու օր, սեպտեմբերի 2-ին և 3-ին: Բացւում է սեպտ. 2-ին Սեդանի յաղթութեան տօնին: Ծնողներն ու ընտանիքի հասակաւոր անդամները հրաւիրւում են ցուցահանդէսը այցելելու:

Մանուկները նշանակուած ժամին խնդութեամբ բերեցին իրանց փայփայած աւանդը: Իւրաքանչիւր տունկը կարճ քննութեան ենթարկուեցաւ, և եթէ փչացել էր՝ թերթի մէջ նշանակուեցաւ: Ապա մրցանակ բաշխողները պարտիզի տիրոջ նախագահութեամբ իրանց պաշտօնն սկսեցին, որպէս զի գնահատեն երևեցած արդիւնքները և որոշեն 25 գովութեան արժանի օրինակները: Հետևանքն այս էր. մայիսի 1-ին բաշխուած 150 տունկերից

1. չորացել էին մօտ 6 $^0/_0$,
2. թերի էին աճել մօտ 4 $^0/_0$,
3. կանոնաւորապէս զարգացել էին մօտ 60 $^0/_0$,
4. պատուական կերպով ուռճացել էին մօտ 30 $^0/_0$.

Հետևանքն ուրեմն խիստ մխիթարական պիտի կոչուէր:

Ապա որոշ ժամին բացուեցաւ ցուցահանդէսը: Տօնախմբութեան ներկայ էին քաղա-

քային խորհրդի անդամները, դպրոցական աւագագոյն վարժութիւնը, ուսուցիչները, ծաղիկխնամող օրիորդաց դասատուները, և հարիւրի չափ հայրեր, մայրեր և լուսաւորութեան բարեկամներն։ Ցեղեկատուն իւր բացման ճառով ցոյց տուեց ծաղիկների կանոնաւոր խնամքի դաստիարակչական նշանակութիւնը, շնորհակալութիւն յայտնեց գործին նպաստողներին և վերջապէս այն աշակերտուհիների անունները կարդաց, որոնք որ մրցանակով պատուեցան։—Այսպէս անսովոր ցուցահանդէսը խիստ բազմաթիւ այցելողներ ունեցաւ։ Ոչ միայն տեղական քաղաքացիք, այլ և շրջակայ գիւղերից անթիւ յաճախորդներ եկան և իւրեանց զարմացումն ու խնդութիւնը արտայայտեցին պայծառերանգ տեսարանի մասին, որ իրանց առջև բացվում էր, երբ որ մտնում էին մարզարանը։ Ցուցահանդէսի միջնակէտը կազմում էր իւրեանց իշխանապետի կիսարձանը՝ շրջապատուած սեննեկազարդ շքեղ բոյսերով և ծաղկի կողովներով, որ ընկերութիւնը ձօնել էր իբրև ընծայ մրցանակի համար։ Այս միջնակէտի շուրջ դասաւորած էին սպիտակ սփռոցով ծածկուած երկար սեղանների վերայ 141 խնամուած տունկերը։ Նոցանից շատերը աչքի էին ընկնում ծաղկած հոյակապութեամբ. միւսները, ինչպէս զոր օր. coleus—տեսակները, հիացնում էին իրանց տերևների բարգաւաճութեամբ, խոշորութեամբ և երփներանգութեամբ. իսկ ամէնքը հրապուրիչ էին սպիտակ և կանաչ ներկած ձողերով, գունաւոր և ճաշակով զարդարուած մետաքսակերպ թղթերի փաթեթներով և այն անծածուկ փութով, որով իւրաքանչիւր փոքրագոյն ճիւղն անգամ կարգաւորած և պնդացրած էր։

Ցուցահանդէսի վերջը աշակերտուհիները դասարան դասարան յետ ստացան իրանց խնամած բոյսերը։ Սոքա այսուհետև նոցա սեփականութիւն են։ Մրցանակի արժանացած աշակերտուհիները ստացան բացի ընծաներից նաև մի նկարակերտ գովասանական վկայագիր, որ պատրաստեց մանկավարժական ժողովը։ Այս վկայագրերը այժմ անշուշտ որպէս պատի զարդ տներում պատուաւոր տեղ են բռնում և իրանց տէրերին երկար ժամանակ, թերևս մինչև ծերութեան օրերը, կը յիշեցնեն անմեղ և սրտաշահ մանկութեան ուրախութիւնները։—

Այս մանրամասն տեղեկութիւնները հանելով „Pädagogische Studien“ պարբերական թերթից, կը ցանկանայինք ընթերցողների ուշադրութիւնը դարձնել, թէ ինչպիսի փոքր միջոցներով կարելի է մանուկներին և ծնողներին մեծ ուրախութիւն պատճառել, և եթէ դպրոցասիրութիւնը կենդանի է մի համայնքի մէջ, այնտեղ ամենափոքր անդամն անգամ, զոր օր. մի պարտիզպան, աւելի մեծ աւագների միախորհուրդ գործակցութեամբ, ինչպէս կարողանում է մի բարի գործ փոխճանին հասուցանել և օրհնութիւն տարածել շատ և շատ ընտանիքներում։

Ս. Մ.

ՄԱՆՐԱԼՈՒՐՔ.

Սեպտ. 18—30-ին վախճանեցաւ Լայպցիգի համալսարանի սենիոր (ուսուցչապետական ակումբի աւագ անդամ), փիլիսոփայութեան ուսուցչապետ Վիլհելմ Դրոբիշ, 94 տարեկան հասակում: Հանգուցեալը հերբարտական ուղղութեան գլխաւոր սիւներից մէկն է եղել եւ իւր կեանքի խնդիր դարձրել է ընդարձակել եւ տարածել Հերբարտի ուսումը: 1824 թ.-ին սկսելով իւր դասախօսութիւնները Լայպցիգում, ուր եւ ծնել ու ուսել էր, նա մինչեւ վերջն էլ մնաց այդտեղ եւ շարունակեց իւր ուսուցչական գործունէութիւնը մինչեւ 1886 թ.-ը, հրատարակելով միաժամանակ մի շարք յայտնի գրուածքներ հոգեբանութեան եւ փիլիսոփայութեան միւս ճիւղերին վերաբերեալ: Կրօնի փիլիսոփայութեան մասին կարդացած իւր դասախօսութիւնների համար նա ստացել էր նաեւ աստուածաբանութեան դոկտորի պատուոյ տիտղոսը:

Ժողովրդական կրթական շարժում Անգլիայում: Բացի համալսարաններից, յաճախ տեղի ունեցող հրապարակական դասախօսութիւններից, Անգլիայում վերջին տարիներս աւելացան բազմաթիւ կրթական հաստատութիւններ հասարակ ժողովրդի դաստիարակութեան համար: Ռեջենտ—Ստրիտի բազմարուեստեան դպրոցը 11000 անդամ ունի: Այս կրթական մեծ հաստատութիւնը հիմնուած է շնորհիւ մի միլիոնատիրոջ առատաձեռնութեան եւ գտնուում է Լոնդոնի համեմատաբար հարուստ մի թաղում: Սրանից չորս տարի առաջ Բորօու—Րոդում, հարաւային Լոնդոնի աղքատ դասակարգի համար հիմնուած է նոր բազմարուեստեան դպրոց, իշխանութեան եւ մասնաւոր նախաձեռնողների ջանքերի շնորհիւ: Տասը տարի առաջ հարաւային Լոնդոնի լուսաւորուած բնակիչները կազմեցին մի մասնաժողով, որի նպատակն էր 1500 բանուորի համար հիմնել ժողովրդական բազմարուեստեան դպրոց: Միջոցներ